ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրո Ամիրխանյանի և Վահե Մովսիսյանի Ֆրանսիայի Հանրապետություն, Փարիզ քաղաք գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սիրո Ամիրխանյան, Վահե Մովսիսյան:

Գործուղված պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը՝ գլխավոր հարկադիր կատարող, գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Փարիզ, 2025 թվականի նոյեմբերի 19-22:

Հրավիրող կողմը՝ Դատական կատարողների միջազգային միություն (այսուհետ՝ Միություն):

Գործուղման նպատակը՝ մասնակցելու՝ Միության Մշտական խորհրդի տարեկան լիագումար նիստին:

Քննարկված թեմաներ՝

ա) Դատական ակտերի հարկադիր կատարման համաշխարհային օրենսգրքի կիրառելիության հետ կապված հարցեր,

բ) Միության և անդամ պետությունների տարեկան հաշվետվությունների ներկայացում,

գ) Միության գործունեության վերաբերյալ որոշումների ընդունում,

դ) հարկադիր կատարման ոլորտում նոր զարգացումների վերաբերյալ սեմինարներ:

Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի ժամանակ ներկայացվել և քննարկվել է Միության կողմից ընդունված մի շարք կանոնագրքերի իրազեկման, կիրարկման և դրանցում փոփոխություններ կատարելու հետ կապված հարցերը, որն ուղեցուցային նշանակություն է ունենալու Միության անդամ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում թվային արժեքների բռնագանձման հնարավորությունները դիտարկելու, համապատասխան օրենսդրական կարգավորումների արդյունքում այդ պետությունների հարկադիր կատարման ոլորտում այն կիրառելու համար: Քննարկվել են Դատական ակտերի հարկադիր կատարման համաշխարհային օրենսգրքի 10 տարիների կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և մարտահրավերները:

Նիստերի ժամանակ Ծառայության ներկայացուցիչները մասնակցել են քննարկումներին, որոնք վերաբերում էին Միության անդամ պետություններում վերջին տարիներին գրանցված ոլորտային բարեփոխումներին: Հարկ է նշել, որ այդ քննարկումները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կատարման ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոխումների առանցքային ուղղություններից՝ հարկադիր կատարման վարույթի ամբողջական թվայնացման և օրենսդրական դաշտի կատարելագործման գործընթացում:

Նիստի ընթացքում անդամ Միությունը ներկայացրել է ֆինանսական և ընդհանուր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ:

Աշխատանքային այցի ընթացքում գլխավոր հարկադիր կատարողի ղեկավարած պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Դատական կատարողների միջազգային միության նախագահ Մարկ Շմիցի հետ: Զրուցակիցները քննարկել են երկկողմանի հետագա համագործակցության ուղղությունները, կնքված համագործակցության հուշագրերի համատեքստում փոխգործակցության նոր հնարավորություններն ու զարգացման հեռանկարները:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ընթացքում Ծառայությունը՝ որպես լիիրավ անդամ, մասնակցել է Միության ընթացիկ գործունեության վերաբերյալ մի շարք որոշումների ընդունման գործընթացին:

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

ՍԻՐՈ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

24.11.2025թ.